

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի «Մարալիկի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կերպարվեստի (3 դասաժամ), տեխնոլոգիայի (տղաների խումբ 6 դասաժամ), ֆիզկուլտուրայի (25 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1)

2. փաստաթուղթ (դիպլոմ), «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ

3. անձնագրի պատճեն

4. ինքնակենսագրություն (Ձև 4)

5. թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում)

6. աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում)

7. մեկ լուսանկար 3×4 չափի

8. այլ պետությունների քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունք

9. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են զինգրքույկ

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի 10-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10⁰⁰. 15⁰⁰, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 12-ին ժամը 13⁰⁰ -ին Շիրակի մարզի «Մարալիկի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Հասցեն՝ ք. Մարալիկ, Հ. Շահինյան փողոց, 6-րդ նրբ, շենք 5

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098 11 01 58, 077 92 93 30